նացրեց: «Պէտք է շտապել», ասաց նա, ամպերը Մասիսներից ցած են իջնում: Ցուրտը թմրեցրել էր ինձ. իսկոյն շիշում մնացած օղիի կէսը յիշեցի, և մնացածը տուի Բրօին, իսկ դատարկ շիշը յանձնեցի քարաժայռի պաշպանութեան: Երեք ժամ ճանապարհորդելից յետոյ մենք գտնվում էինք բոլորովին ապահովութեան մէջ, այսինքն Բրօյի ծանօթի տանը ու եղ ու ձու էինք ուտում: Ցաւում եմ շատ, որ այդ անհուն յիշատակարանաց և հնութեանց մէջ մտնելով և դուրս գալով, կարող եմ միայն այս հասարակ դիպուածը պատմել. միևնոյն է թէ մէկը մտնի մի ամենահարուստ մուզէումի մէջ և դեռ որոշ ոչինչ չը տեսած, նորա թևից բռնեն և դուրս ձգեն: Բայց ես Բրօյին խօսք տուի այդ անյաջող ճանապարհորդութիւնը կրկնել մի այլ անգամ:

«Որ եղանակ աւելի յարմար է», հարցրի:

—«Գարուն»—պատասխանեց նա:

Ցիշեալ գաւառների կեդրոն և մի միայն քաղաքը է Մագու, որ ընկնում է 62° ու 0′, 62° ու 15′, 39° ու 30′, 39° ու 15′ լայնութեան և երկայնութեան տակ, չորս հազար երեք հարիւր յիսուն երեք (4353) ոտնաչափ բարձրութեան վերայ: Մագու շինված է Փոքր Մասիսի հարաւակողմը, նորանից յիսուն վերստ հեռաւորութեան վերայ, Գալա-դաղի ստորոտում մի նեղ ձորի մէջ, որ ձգուած է արևմուտքից դէպի արևելք: Մօտ չորս հարիւր տուն